## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/118 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **1 օգոստոսի 2024թ.**

2024թ-ի հուլիսի 29-ից օգոստոսի 1-ը ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ էլեկտրոշարժիչի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/118 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Մելքոնյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Բալահովիտ ՈՒՓՏ մ/ճ-ի տնօրենի պ/կ, |
| Ա. Ազիզյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Բալահովիտ ՈՒՓՏ մ/ճ-ի ֆերմայի վարիչ; |
| Ռ. Ազիզյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Բալահովիտ ՈՒՓՏ մ/ճ-ի պահեստապետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Մելքոնյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

**1.** Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

**2.** Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:

**3.** Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

**4.** Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2024թ-ի հուլիսի 29-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 10:00-ին նախագահը

նիստը հայտարարեց բացված, և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Էլեկտրոշարժիչ | 35000 |

ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/118 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/118 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Մելքոնյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Ազիզյան ____________

Ռ. Ազիզյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ____________